

ՀՀ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Հայտատու մարմինը՝

**Կոռուպցիայի կանխարգելման
հանձնաժողով**

**Հայտի հաստատման
ամսաթիվը՝**

01.07.2026թ.

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2027-2029 թվականների պետական ՄԺԾԾ և 2027 թվականի պետական բյուջեի (այսուհետ՝ Նախագիծ) միջնաժամկետ ծախսերի ծրագրով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման և շարունակական կատարելագործման ապահովումը:

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրից (տե՛ս՝ «Իրավունք և արդարադատություն» 5-րդ բաժնի, 5.5 ենթակետի «Կոռուպցիայի դեմ պայքար»), ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2117-Լ որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից (տե՛ս՝ Արդարադատության նախարարություն, նպատակ 16 «Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության իրագործում»), ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից և դրանից բխող գործողությունների ծրագրից (տե՛ս՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, «Քննչական մարմինների համակարգի բարեփոխում» վերնագրի ներքո, գործողությունների ծրագիր՝ «Նպատակ 5. Քրեաիրավական ոլորտի բարեփոխումներ»), հիմնված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Դատական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի, «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքի, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի «Զարգացման քաղաքականության գործառնություն» («DPO») բյուջետային աջակցության (Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման քաղաքականության գործառնության համար, Հենայուն 3. Հանրային հատվածի կառավարման և արդյունավետության բարելավում՝ ի աջակցություն տնտեսական աճի, Նվերների հաշվառում), Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 5-րդ փուլի գնահատումների, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) 5-րդ փուլի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը ներկայացված առաջարկությունների և հանձնարարականների վրա:

Սույն միջնաժամկետ ծրագրի հիմնական թիրախներն են.

1. Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման գործող կառուցակարգերի կատարելագործում.
2. Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման և կրթական ծրագրերի շարունակական իրականացում.
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների շարունակական զարգացում.
4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության բարձրացում.
5. Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքների թվայնացում, արհեստական բանականության միջոցով տվյալների վերլուծություն:

Ակնկալվում է նշված թիրախների միջոցով ապահովել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 5-րդ փուլի գնահատումների համապատասխանելիությունը, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության գնահատման Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ոլորտի առնչությամբ տրված ցուցանիշների (գնահատականների) բարձրացումը:

Սույն ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ բարեվարքության կառուցակարգերի շարունակական կատարելագործման միջոցով նպաստել հանրային իշխանության մարմիններում, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում բարեվարքության ամրապնդմանը, բարեվարք վարքագծի ձևավորմանը, կոռուպցիոն ռիսկերի և դրսևորումների նվազեցմանը, թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև կոռուպցիայի նկատմամբ հանրության զգայունության և անհանդուրժողականության բարձրացմանը:

Այս վերջնարդյունքը բխում է ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշներից (մասնավորապես՝ «Նպատակ 16.5. Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով»):

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Սույն միջնաժամկետ ծախսերի ծրագրով Հանձնաժողովի կողմից իրականացվող բյուջետային ծրագիրն ուղղված է կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության քաղաքականության, նորմատիվ իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքի զարգացմանը: Ծրագրի նպատակն է՝ նպաստել

կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը և հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը:

Հանձնաժողովը վերահաստատում է, որ նշված գործընթացների շարունակական իրականացումն ու ներդրված համակարգի շարունակական բարելավումը կանխարգելիչ բնույթի աշխատանքներ են, որոնք թույլ կտան կոռուպցիոն սխեմաների արդյունավետությունը նվազեցնել կամ մոտեցնել նվազագույնի:

(*տե՛ս՝ ՀՀ Կառավարության 22 դեկտեմբերի 2022 թվականի N 2117 – Լ որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր, Արդարադատության նախարարություն, նպատակ 16 Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության իրագործում, տես ՀՀ Կառավարության 13 մայիսի 2022 թվականի N 691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն, Գործողություն 3.36 Ճկուն աշխատանքային պայմանների ապահովման ընթացակարգերի ամբողջական ներդրում պիլոտի արդյունքների գնահատման հիման վրա*):

Զուգահեռաբար, Հանձնաժողովը 2027-2029 թվականներին ապահովելու է բարեվարքության համակարգի տարրերի շարունակական կիրառումը:

Այս համատեքստում ապահովելու է նաև շահերի բախման, այլ սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների պահպանման վերահսկման արդյունավետ մեխանիզմների խթանումը, ինչպես նաև վարքագծի կանոնների միասնական համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները (*տե՛ս՝ ՀՀ կառավարության 2022 թվականի 13 մայիսի N 691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն, Գործողություն 3.16. Պետական համակարգում էթիկայի և բարեկարգության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացում, Գործողություն 3.28. Էթիկայի և բարեկարգության մոնիթորինգի ներդրում, «DPO» Հենասյուն 3. Հանրային հարվածի կառավարման և արդյունավետության բարելավում, ԳՐԵԿՈ 5-րդ փուլի գնահատումներ*):

Մասնավորապես, 2027 թվականին Հանձնաժողովը շարունակելու է բարեվարքության համակարգի վերոնշյալ տարրերի առնչությամբ մեղիա հրապարակումների և դիմումների ուսումնասիրությունը, առերևույթ խախտումների քննությունները, հանրային իշխանության մարմիններին և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ իրավիճակի լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը, բարեվարքության համակարգի և դրա տարրերի կիրառման շրջանակներում խորհրդատվության տրամադրումը հանրային իշխանության մարմիններին, հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում՝ բարեվարքության հարցերով

կազմակերպիչներին: Զուգահեռաբար իրականացվելու է համապատասխան անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկումը:

Հանձնաժողովն ապահովելու է նաև բարեվարքության համակարգի վերաբերյալ հանրային պաշտոն գբաղեցնող անձանց, հանրային ծառայողների (այդ թվում՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների) կարողությունների զարգացումը՝ թիրախային վերապատրաստումների միջոցով:

Բարեվարքության համակարգի ամրապնդման նպատակով Հանձնաժողովը կատարելագործելու է բարեվարքության ուսումնասիրության և գնահատման համակարգը: Պետության կողմից որդեգրված հակակոռուպցիոն քաղաքականության, ինչպես նաև Հանձնաժողովին վերապահված կանխարգելման մանդատի իրականացման տեսանկյունից Հանձնաժողովի առանցքային գործառույթներից է պետական պաշտոնների հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքում իրավասու մարմին համապատասխան խորհրդատվական եզրակացության տրամադրումը: Նշված գործընթացի շարունակական և արդյունավետ իրականացման արդյունքում հնարավոր կլինի հասնել պետական պաշտոններում հավակնող անձանց բարեվարք կերպարի ձևավորմանը՝ հետևողական պայքար մղելով պետական համակարգում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով որոշումներ կայացնելու և մի շարք այլ արատավոր գործընթացների և երևույթների դեմ:

Հանդիսանալով ՀՀ հակակոռուպցիոն կրթական և իրազեկվածության բարձրացման արշավների իրականացման պատասխանատու գերատեսչություն՝ Հանձնաժողովը 2027 - 2029 թվականներին ապահովելու է հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման շարունակական իրականացումն ու կառուցակարգերի կատարելագործումը, ինչպես նաև հանրային իշխանության մարմիններում բարեվարքության մշակույթի շարունակական ներդրումը և զարգացումը: Մասնավորապես նախատեսվում է ապահովել

- e-learning էլեկտրոնային ուսուցման հարթակով հանրային ծառայողների համար պարտադիր, ինչպես նաև շարունակական վերապատրաստման դասընթացների իրականացումը,
- կրթական ոլորտի, բուհերի դասախոսների և մանկավարժների շրջանում կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության թեմաներով վերապատրաստման դասընթացների իրականացումը,
- Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ ներկայացուցիչների, ինչպես նաև երիտասարդների շրջանում շարունակական իրազեկման հանդիպումների իրականացումը:

Հանձնաժողովի առաջնահերթությունների շարքում առանցքային է ռազմավարական հաղորդակցության ամրապնդումը, որի հիմքում նախատեսվում է դնել կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի համապարփակ ուսումնասիրության արդյունքները: Սա թույլ կտա մշակել փաստահեն հաղորդակցության ռազմավարություն՝ ապահովելով հանրության հետ երկխոսության հասցեականությունն ու արդյունավետությունը:

Նշված արդյունքների ապահովման համար էական պայման է հանդիսանում նաև կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների թվայնացումը: Սա ենթադրում է հայտարարագրման, բարելավարքության ուսումնասիրության համակարգերի և նվերների ռեեստրի միավորում միասնական հարթակում՝ ապահովելով տվյալների մուտքագրման, մշակման, պահպանման և փոխանցման խելամիտ և արդյունավետ լուծումների կիրառում:

Թվային լուծումների ներդրմամբ և լայնատարած օգտագործման ապահովմամբ նպաստելու ենք՝ արդյունավետ կառավարմանը: Թվայնացված համակարգի հիմնական առավելություններն են՝ տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը, ինչպես նաև հաշվետվողականության և թափանցիկության բարձրացումը: Միասնական համակարգը կնվազեցնի սխալների հավանականությունը և կբարձրացնի տվյալների ճշգրտությունը՝ ապահովելով ավտոմատացված ստուգումներ և խաչաձև վերահսկողություն: Ավտոմատացված գործիքակազմի միջոցով կրճատվում են վարչարարության ժամկետները և ռեսուրսները՝ ապահովելով արագ արձագանք և որոշումների կայացում: Այսպիսով, թվայնացումը կնպաստի պետական կառավարման համակարգում վստահության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և պետական ծառայության որակի բարելավմանը՝ դառնալով բարելավարքության ինստիտուցիոնալ մշակույթի ձևավորման հիմնաքար:

Հարկ է նաև ընդգծել, որ թվայնացման լուծումներն ունեն արտաքին ազդեցություն ու միտված են վարչարարության պարզեցմանը և ծառայությունների մատչելիության բարձրացմանը: Չնայած դրան՝ այդ միջոցառումները չեն հանգեցնում Հանձնաժողովի կողմից իրականացվող գործառույթների ծավալի կրճատման: Անձնական տվյալների մեծածավալ մշակման առանձնահատկություններով, ինչպես նաև մշակվող տեղեկատվության բնույթով պայմանավորված՝ նպատակահարմար և գործնականում արդյունավետ չէ այդ գործառույթների ամբողջական փոխանցումը արհեստական բանականության գործիքներին:

2026 թվականի հունվարին Ազգային ժողովն ընդունել է ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվում է կոռուպցիոն ռիսկերի

գնահատման համակարգի ներդրում հետևյալ մարմիններում և կազմակերպություններում.

1. Հանրային իշխանության մարմիններում.

2. Առողջապահության, սոցիալական պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի իրականացման ոլորտներում գործող, ինչպես նաև վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում,

3. Պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում,

4. Պետական, համայնքային կամ պետական և համայնքային համախառն բաժնեմասը հիստուն և ավելի տոկոս կազմող ընկերություններում:

Օրենքի ընդունմամբ Հանձնաժողովին են վերապահվել հետևյալ նոր լիազորությունները.

- նշված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակում և հաստատում.
- գնահատումների իրականացում և արդյունքների հրապարակում.
- արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններ.
- մասնագիտական խորհրդատվության տրամադրում:

Կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակում Հանձնաժողովը առաջնահերթություն կտա կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ այդ թվում վարչարարության պարզեցմանը, հայեցողական որոշումների շրջանակի սահմանափակմանը, թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը, բարեվարքության մշակույթի ամրապնդմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման այլ համակարգային գործոնների զարգացմանը: Գնահատման արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը իրավասու կլինի գնահատման գործընթացին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել և ստանալ համապատասխան մարմիններից և կազմակերպություններից:

Համակարգի արդյունավետ ներդրումը հնարավորություն կտա 2027-2029 թվականներին իրականացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատումներ Հանձնաժողովի կողմից սահմանված գործընթացներում՝ հիմնվելով մեթոդաբանությամբ սահմանված ռիսկայնության չափորոշիչների վրա: Նման մոտեցումը հնարավորություն կտա ռեսուրսները կենտրոնացնել այն գործընթացների վրա, որոնք օբյեկտիվորեն առավել խոցելի են կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ, և ապահովել դրանց խորքային և փաստահեն վերլուծություն:

Այս վերջնարդյունքը համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի նպատակների հետ, մասնավորապես՝ (...) Վարչական կոռուպցիայի հաղթահարման գործում Կառավարությունը կարևորում է ռիսկերի և կարիքների վրա հիմնված քաղաքականության մշակումը: Ըստ այդմ՝ Կառավարությունը մտադիր է պետական և տեղական մակարդակում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատում և դրա հիման վրա մշակել միջոցառումների ծրագրեր (...):

3. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Բազային բյուջեի գնահատում

Սույն միջնաժամկետ ծախսերի ծրագրով Հանձնաժողովի կողմից իրականացվող բյուջետային ծրագիրն ուղղված է՝ Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության քաղաքականության, նորմատիվ իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքի զարգացմանը: Ծրագրի նպատակն է՝ նպաստել կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը և հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում սահմանվել են հետևյալ միջոցառումները.

1. Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում,
2. Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ:

3.2. Նոր նախաձեռնություններ

Սույն փաստաթղթի իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային առաջարկները, որոնք վերաբերվում են գոյություն ունեցող («ՀՀ 2026թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված) ծրագրերի/միջոցառումների (օրինակ՝ ծառայությունների, տրանսֆերտների) շրջանակի և/կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը՝ այսինքն, երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և/կամ հաստատված ծառայությունները տարածել շահառուների նոր խմբերի վրա: Նոր նախաձեռնություններն ըստ էության ենթադրում են բազային բյուջեի հիմքում դրված օրենսդրության կամ քաղաքականությունների փոփոխություն:

Նոր նախաձեռնություններն ըստ քաղաքականության փոփոխության բնույթի դասակարգվում են երկու խմբերում.

ա/ **Բազային բյուջեի ընդլայնում** են համարվում այն նոր նախաձեռնությունները, որոնք ենթադրում են բազային բյուջեի միջոցառումների գծով շահառուների շրջանակի ընդլայնում և/կամ երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ շահառուների նույն խմբին: Այսինքն, այս դեպքում առաջարկվում է գոյություն ունեցող միջոցառումները (ծառայություններ, տրանսֆերտներ և այլն) տարածել շահառուների նոր խմբերի վրա: Բազային բյուջեի ընդլայնումները, բյուջեբյուջային դասակարգումների տեսանկյունից, որպես կանոն դիտարկվում են որպես գոյություն ունեցող միջոցառումներում կատարվող փոփոխություններ, սակայն առանձին դեպքերում դրանք կարող են ներկայացվել նաև որպես ամբողջությամբ նոր (մինչ այդ գոյություն չունեցող) միջոցառումներ:

Հայտատու մարմինների կողմից ներկայացվող այն առաջարկները, որոնք իրենց մեջ պարունակում են բազային բյուջեի նկատմամբ ծախսերի այնպիսի աճ, որոնք պայմանավորված չեն Հայտատուից անկախ գնային և ոչ գնային գործոնների փոփոխությամբ, սահմանված չեն նորմատիվ իրավական ակտով, այլ պարզապես ենթադրում են ծախսային տարրի մեծության փոփոխության հայեցողական առաջարկ (օրինակ՝ գործող հաստիքների թվաքանակի ավելացում կամ աշխատավարձերի բարձրացում, որը պայմանավորված չի վերջինիս բնականոն աճով), պետք է ներկայացվեն որպես նոր նախաձեռնություններ (գործող միջոցառման ընդլայնման առաջարկ), քանի որ այս պարագայում ըստ էության առաջարկվում է վերանայել ծախսային քաղաքականության շուրջ արդեն իսկ կայացված որոշումները:

բ/ **Նոր ծառայություններ/միջոցառումներ** են համարվում այն նոր նախաձեռնությունները, որոնք ենթադրում են բազային բյուջեից դուրս (գոյություն ունեցող պարտավորություններից դուրս) ամբողջությամբ նոր միջոցառումների (ծառայություններ, տրանսֆերտներ և այլ) իրականացում: Նոր ծառայությունները, բյուջեբյուջային դասակարգումների տեսանկյունից, որպես կանոն դիտարկվում են որպես ամբողջությամբ նոր (մինչ այդ գոյություն չունեցող), առանձին միջոցառումներ:

Վերոհիշյալ երկու խմբերում դասվող յուրաքանչյուր նոր նախաձեռնության մասով անհրաժեշտ է համառոտ նկարագրել ծախսային նոր նախաձեռնությունները և ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության, ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է նկարագրել նոր նախաձեռնություններից բխող ծրագրերից/միջոցառումներից յուրաքանչյուրի գծով նպատակները և թիրախային վերջնական արդյունքները և թե ինչպես են դրանք նպաստելու Դոկտրինով, ՀՀ կառավարության ծրագրով և ոլորտային ռազմավարություններով սահմանված կոնկրետ նպատակների և քաղաքականության թիրախների ապահովմանը:

Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունն առնչվում է միջոլորտային (խաչվող) առանձին քաղաքականությունների նպատակների հետ, ինչպիսիք են (i) գենդերային քաղաքականությունը և (ii) կլիմայի փոփոխության մեղմմանն և հարմարվողականությանն ուղղված ծրագրերը, և ԼՂ տեղահանվածներին աջակցության ծրագրերը, 2027թ. բյուջեբյուջային հայտի փուլում անհրաժեշտ է

նկարագրել, թե նոր նախաձեռնության շրջանակներում իրականացվող միջոցառումն ինչպես է նպաստելու համապատասխան քաղաքականության նպատակ(ներ)ի իրագործմանը: Դրանք այն քաղաքականություններն են, որոնց արդյունքներն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն առնչվում են մեկից ավելի ոլորտների, նպատակների և գերատեսչությունների հետ և առկա ծրագրային կառուցվածքը հնարավորություն չի տալիս արդյունավետ կերպով առանձնացնել այդ քաղաքականություններին ուղղված ծախսերը:

Քաղային բյուջեի ընդլայնման պարագայում ծախսակազմման/ծախսերի հաշվարկման նպատակով կարող են կիրառվել գոյություն ունեցող համապատասխան պարտավորության ծախսերի հաշվարկման նպատակով կիրառվող ծախսակազմման ձևաչափերը:

Անհրաժեշտ է նկարագրել, թե նոր նախաձեռնությունների իրականացումը ինչ նոր բյուջետային ծրագիր (ծրագրեր) և միջոցառումներ կպահանջի կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով ինչ նոր շահառուների խմբեր կընդգրկի: Պետք է նկարագրել նաև, թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Եթե նոր նախաձեռնությունները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):

Այն դեպքերում, երբ նախատեսվում է նոր ծրագրի իրականացում (այլ ոչ թե քաղային բյուջեի ընդլայնում), ապա անհրաժեշտ է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք հիմնավորում են տվյալ որոշումը:

Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:

ՄԺԾԾ փուլում նոր նախաձեռնությունների գծով ծախսերի վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել ամփոփ տեղեկատվություն սույն ցուցումների Հավելված 2-ի Ձևաչափ 1 -ում ներկայացված աղյուսակին համապատասխան:

Բյուջետային հայտի փուլում նոր նախաձեռնություններից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացնել նաև առանձին տեսքով՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 2-ի Ձևաչափ 2-ում ներկայացված ձևաչափին համապատասխան (յուրաքանչյուր նոր նախաձեռնության համար անհրաժեշտ է կրկնօրինակել Հավելված 2-ի Ձևաչափ 2-ը):

Նոր նախաձեռնությունների (ներառյալ այլընտրանքների) գծով ծախսակազմումներն անհրաժեշտ է իրականացնել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներին» համապատասխան: Ծախսակազմման

փաստաթղթերը/ֆայլերը պետք է հանդիսանան հայտի բաղկացուցիչ մասը և հայտի հետ միասին սահմանված կարգով ներկայացվեն ՀՀ ՖՆ:

Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:

Ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների անհրաժեշտ է ներկայացնել՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 4-ի ձևաչափերին համապատասխան 2027թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում: Նոր նախաձեռնությունների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսերը:

Կապիտալ ծախսերի գծով նոր նախաձեռնություններ են հանդիսանում այն ծախսային առաջարկները, որոնք ներառված չեն գոյություն ունեցող պարտավորություններում: Օրինակ, եթե բազային կամ դրան նախորդող տարիներին միջոցներ են նախատեսվել որևէ կապիտալ միջոցառման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար և բյուջետային հայտի ներկայացման պահին առկա են համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերը և վերջիններիս գծով դրական փորձագիտական եզրակացությունները, սակայն բուն շինարարական աշխատանքների ծախսերի ֆինանսավորման համար բազային բյուջեում/գոյություն ունեցող պարտավորություններում գումարներ նախատեսված չեն, ապա համապատասխան շինարարական աշխատանքների ֆինանսավորման գծով ծախսային առաջարկներն հայտում պետք է ներկայացվեն որպես նոր նախաձեռնություններ:

Շինարարական օբյեկտի պլանավորման գործընթաց.

1. Շինարարական աշխատանքների ծախսերի նախնական հաշվարկ (ՇԱԱԽՅ)' հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի՝ 23.12.2024թ. «Կառուցվող, հիմնանորոգվող, վերակառուցվող, վերականգնվող, ուժեղացվող, ընդլայնվող, արդիականացվող, վերազինվող, նորոգվող, քանդվող կամ ապամոնտաժվող շենքերի և շինությունների, կառուցվածքների, շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 09-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 31-Ն հրամանը

2. Նախագծային փաստաթղթերի մշակման արժեքի խոշորացված ծախսերի հաշվարկ՝ շինարարության արժեքից ելնելով՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 15.02.2008թ. «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 19-Ն հրամանը

3. Նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծախսերի խոշորացված հաշվարկ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 17.10.2024թ. «Շինարարական աշխատանքների գնագոյացման նախահաշվային նորմերն ու դրանց կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 1656-Ն որոշումը

4. Ելակետային տվյալների ձեռքբերման համար խոշորացված ծախսերի հաշվարկ՝ տարածքի կամ հողատարածքի ինժեներաերկրաբանական և գոյություն ունեցող շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության խոշորացված ծախսերի հաշվարկ, որից ինժեներաերկրաբանական մասով՝ յուրաքանչյուրը կարող է նախատեսվել 1.5-մինչև 5.0 մլն դրամ, տեխնիկական վիճակի հետազննության մասով՝ 0.5-2.0 մլն դրամ

5. Շինարարական օբյեկտի ընդհանուր ծախսերի հանրագումարի հաշվարկ ըստ 1-ից 4-րդ կետերի, որոնց վերջնահաշվարկում անհրաժեշտ է կիրառել ավելացված արժեքի հարկի տոկոսաչափը (*1,2)

6. Խոշորացված ծախսերով հաշվարկված շինարարական օբյեկտի արժեքները տրամադրվում են տվյալ շինարարական ծրագրի պլանավորման համար, սակայն ենթակա են ճշգրտման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումից հետո:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով նոր նախաձեռնությունները այլ հավասար պայմաններում ՄԺԾԾ փուլում չեն կարող ներառվել առանց այդ ծրագրերի գծով դոնորների հետ սկսված բանակցությունները և ձեռք բերված պայմանավորվածությունները հավաստող տեղեկատվության առկայության, իսկ 2027թ. պետական բյուջեում այդ ծրագրերն այլ հավասար պայմաններում կարող են ներառվել բացառապես ստորագրված վարկային կամ դրամաշնորհային համաձայնագրերի առկայության պայմաններում:

3.3. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1181- Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում

1) Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ

Հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումներից պարտադիր ծախսերին դասվող է համարվում 11001 - Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում միջոցառումը:

2) Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ

Հանձնաժողովի կողմից իրականացվող 11002-Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքները համարվում են հայեցողական ոչ շարունակական ծախսեր:

Ակնկալվում է բարեփոխված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկման համար ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման

արդյունավետ կիրառմանն անհրաժեշտ կրթական ծրագրեր,, դրանք ներդնել կրթության համակարգ և ապահովել հակակոռուպցիոն մասնագիտացված կրթություն:Արդեն գործող էլեկտրոնային ուսուցման հարթակում նոր ծրագրերի մշակումը՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով:

3.4 Ծախսերի այլընտրանքային սցենարները

2027թ. բյուջեբային հայտի շրջանակներում, որպես հայտի բաղկացուցիչ մաս, Հայտատու մարմինները, 2027-2029թթ. ՄԺԾԾ-ով իրենց գծով հաստատված չափաքանակների շրջանակներում ներկայացվող հիմնական ծախսային առաջարկից բացի, ՀՀ ՖՆ պետք է ներկայացնեն նաև ծախսերի այլընտրանքային սցենարներ, մասնավորապես՝ բազային բյուջեի ծախսերի 5% ցածր ընդհանուր ծախսային առաջարկի սցենար՝ համաձայն սույն ցուցումներին կից Հավելված 17-ով ներկայացված ձևաչափի:

Այլընտրանքային սցենարը ներկայացնելիս հայտատու մարմինն ինքնուրույն է որոշում իր պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի առանձին միջոցառումների գծով ծախսերի փոփոխման չափը՝ ելնելով ոլորտային առաջնահերթություններից, առկա պարտավորություններից, ծախսերի փոփոխման հնարավորությունից, քաղաքականության և օրենսդրության վերանայման կարիքներից և դրանց իրարեսականությունից և այլն: Առաջարկը ձևավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա իրարեսականությունը, այսինքն առաջարկը պետք է կառուցել այնպես, որ առավելագույնը 3-6 ամսում հնարավոր լինի ամբողջությամբ այն իրագործել:

Այլընտրանքային ծախսային սցենարները ներկայացնելիս ծախսերի նվազեցման առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել բացառապես ընթացիկ ծախսերի մասով:

Այլընտրանքային ծախսային առաջարկները կարող են ենթադրել ինչպես առանձին ուղղություններով ծախսերի խնայողություններ, տնտեսումներ և օպտիմալացումներ (օրինակ՝ սպասարկող անձնակազմի կրճատում, հոսանքի ծախսերի տնտեսում, գործառույթների միավորում և այլն), այնպես էլ ծառայության մատուցման կամ ընդլայնման տեմպերի վերանայում, նոր մեկնարկող միջոցառումների հետաձգում կամ չեղարկում, ոչ արդյունավետ միջոցառումների դադարեցում, շահառուների գործող շրջանակի վերանայում, ծառայությունների շրջանակի կամ մատուցման մեխանիզմի (օրինակ՝ սեփական ռեսուրսներով մատուցում՝ արտապատվիրակման փոխարեն և այլն) վերանայում և այլն:

Անհրաժեշտ է ներկայացնել նաև այդ գործողությունների իրականացման հետ կապված ռիսկերը: Եթե նվազեցվող միջոցառումն օրգանապես կապված է այլ ծախսային միջոցառումների հետ, որոնք կազդվեն միջոցառման վերանայման արդյունքում, անհրաժեշտ է բացահայտել այդ կապերը և ներկայացնել նաև առաջարկի ազդեցությունը ազդվող միջոցառումների վրա:

Այլընտրանքները չեն փոխարինում հայտով ներկայացվող ծախսերի հիմնական սցենարը, որը կդիտարկվի որպես 2027թ. բյուջեային ֆինանսավորման հայտ, այլ նպատակ ունեն 2027թ. բյուջեային ծախսերի հիմնական սցենարին զուգահեռ ձևավորել բազային բյուջեի այլընտրանքային սցենար:

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՄՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համառոտ ներկայացնել հայտարարու մարմնի, ինչպես նաև վերջինիս ենթակայությամբ գործող պետական կազմակերպությունների կողմից 2027-2029թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում սպասվող եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 6-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանձնաժողովի կողմից Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքները նպաստելու են մարզերում իրազեկվածության բարձրացմանը: Հանձնաժողովը մշտապես կարևորել է հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնելիս ԶԼՄ և ՔՀԿ ներկայացուցիչների, մանկավարժների և դպրոցախասակ երեխաներ ունեցող ծնողների դերը, այդ իսկ պատճառով՝ վերջիններս ընտրվել են որպես թիրախային խումբ՝ Երևանում և ՀՀ մարզերում իրականացվող իրազեկման հանդիպումներ իրականացնելիս:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ՝ որպես ռազմավարական 3-րդ նպատակ սահմանված է հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումը, ըստ որի՝ Հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումները պետք է ուղղված լինեն նրան, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստի իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական կենսագործմանը:

6. ՄԻՋՈՒՆՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նկարագրել, թե ինչպես են բյուջետային ծրագրերը/միջոցառումները նպաստելու միջոցառումներին (խաչվող) բնույթի առանձին քաղաքականությունների նպատակների և գերակայությունների իրագործմանը: Դրանք այն քաղաքականություններն են, որոնց արդյունքներն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն առնչվում են մեկից ավելի ոլորտների, նպատակների և գերատեսչությունների հետ և առկա ծրագրային կառուցվածքը հնարավորություն չի տալիս արդյունավետ կերպով առանձնացնել այդ քաղաքականություններին ուղղված ծախսերը:

Մասնավորապես, անհրաժեշտ է առանձին ներկայացնել բյուջետային հայտում ներառված բոլոր այն ծրագրերն ու միջոցառումները, որոնք ուղղված են կամ նպաստում են հետևյալ խաչվող քաղաքականությունների ապահովմանը.

- (i) գենդերային քաղաքականություն
- (ii) կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ
- (iii) ԼՂ-ից տեղահանվածներին աջակցության միջոցառումներ:

Վերոհիշյալ յուրաքանչյուր քաղաքականությանն առնչվող ծրագրերն ու միջոցառումներն ամփոփ ներկայացնել սույն ցուցումներին կից՝ Հավելված 9-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

Հավելվածում պետք է ներկայացնել նաև համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվություն, համապատասխան խաչվող քաղաքականության նպատակների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես են ներկայացված ծրագրերն ու միջոցառումները նպաստելու այդ նպատակների իրագործմանը:

Հավելվածում անհրաժեշտ է ներառել հայտով ներկայացված՝ համապատասխան քաղաքականություններին առնչվող ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ նոր նախաձեռնություններ հանդիսացող ծրագրերն ու միջոցառումները:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՅՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՅՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Համառոտ նկարագրել արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները և այդ ֆինանսական ռեսուրսների ստացման աղբյուրները (առանձին ցույց տալով նաև այդ ծրագրերի/միջոցառումների գծով ՀՀ կառավարության համաֆինանսավորման չափաքանակները): Այդ առումով, ի լրումն սույն օրինակելի ձևի 3, 4 և 5-րդ կետերով պահանջվող տեղեկատվության, այդ ծրագրերի/միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ ձևով ներկայացնել նաև սույն ցուցումներին կից՝ Հավելված 7-ի Ձևաչափ 1-ին, 2-ին և 3-ին համապատասխան:

Ծրագրերի նկարագրությունները պետք է լինեն բովանդակային՝ համապատասխան հաշվարկներով հիմնավորված:

Բովանդակային բացատրագրերում առնվազն պետք է ներառվեն ծրագրերի գծով ըստ գնումների պլանի ընթացիկ (Ծրագրերի իրականացման գրասենյակների (այսուհետ՝ ԾԻԳ) պահպանման ծախսերի՝ ներառյալ հաստիքացուցակով նախատեսվող աշխատավարձի ֆոնդի և աշխատողների թվաքանակի, խորհրդարվական աշխատանքների և այլ ընթացիկ ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (այդ թվում՝ ըստ օբյեկտների շինարարության, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության և ապրանքների ձեռքբերման մրցույթների փուլերի, և այլ կապիտալ ծախսերի) ընթացքի և կանխատեսումների վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով տեղեկատվական և վերլուծական դրույթներն ըստ ծրագրերի բաղադրիչների, այդ թվում՝

ա/ շինարարական և այլ աշխատանքների գծով՝ իրականացվելիք աշխատանքներն ըստ օբյեկտների, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը, մրցույթի ընթացքը, կապալի պայմանագրի առկայությունը, շինարարական աշխատանքների ավարտը և կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունները,

բ/ ապրանքների և նյութերի ձեռքբերման գծով՝ ապրանքների տեսականին, անհրաժեշտությունը և նպատակը, ձեռքբերման մրցույթի ընթացքը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

գ/ տեխնիկական աջակցության և խորհրդարվության գծով՝ ձեռքբերման անհրաժեշտությունը և նպատակը, նախատեսված ծախսի հաշվարկ-հիմնավորումը, տեխնիկական առաջադրանքների (TOR-երի) առկայությունը, մրցույթի ընթացքը, ծառայության մատուցման ավարտը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

դ/ կառավարման կամ ԾԻԳ-երի պահպանման ծախսերի գծով՝ նախատեսված ծախսերի անհրաժեշտությունը, նպատակը, ուղղվածությունը և համապատասխան պարզաբանումները:

Ի լրումն այդ տեղեկատվության, անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ ծրագրերն իրականացնող գրասենյակների (ԾԻԳ-երի) պահպանման ծախսերի նախահաշիվները՝ ՀՀ ՖՆ ներկայացվող ձևաչափերին համապատասխան, դրանց հաշվարկ-հիմնավորումներով:

Հաշվարկ-հիմնավորումներում առնվազն պետք է ներառվեն ծախսերի հաշվարկման գործող մեթոդաբանությամբ և նորմատիվներով կոնկրետ հաշվարկները և կանխատեսումների հիմքում դրված սցենարները՝ դրանց վրա ազդող գործոնային գնահատումներով և պարզաբանումներով՝ 2027/2026 թվականների համադրմամբ և շեղումների դեպքում՝ համապատասխան պարզաբանումների ներկայացմամբ, այդ թվում՝

- աշխատողների թվաքանակը, ըստ պաշտոնների աշխատավարձի ամսեկան դրույքաչափերը և աշխատավարձի ֆոնդի հաշվարկը, համադրումը ընթացիկ տարվա ցուցանիշների հետ և փոխկապակցումը ծրագրի իրականացման ընթացքի հետ,

- ծառայությունների (գործառնական և բանկային, էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության, վարձակալության և այլն) ձեռքբերման ծախսերի

հաշվարկը, համադրումները և փոփոխության դեպքում՝ դրանց գործոնային ազդեցության գնահատումները և պարզաբանումները,

- գործուղումների և շրջագայությունների (ներքին և արտաքին) ու գործուղվող անձանց քանակը, մեկնման վայրերը, անհրաժեշտությունը և նպատակը, գործուղման ծախսերի հաշվարկ-հիմնավորումները, համադրումները և կապը ծրագրի իրականացման տվյալ փուլի հետ,

- այլ պայմանագրային ծառայությունների (վարչական, համակարգչային, տեղեկատվական, մասնագիտական զարգացման, կառավարչական, ներկայացուցչական և այլն) անհրաժեշտությունը, պահանջվող գումարների հաշվարկները, մրցույթների ընթացքի, պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և պարզաբանումները,

- ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի գծով (շենքեր և մեքենաներ) հաշվարկները, նորոգման բնույթը և ծավալը, և այդ շրջանակներում կատարվող ձեռքբերումների հիմնավորումը,

- նյութերի (գրասենյակային, վերապատրաստման, տրանսպորտային) և այլ ծախսերի գծով հաշվարկները և համադրումները:

8. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացնել 2027-2029թթ. ժամանակահատվածի համար պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները)՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 8 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ներկայացնել հայտի հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց վերլուծությունը: Մասնավորապես, ներկայացնել հայտի (ըստ առանձին ծրագրերի) հիմքում ընկած ենթադրությունների իրադրության հետ կապված հիմնական ռիսկերը (օրինակ ծախսային գործոնների գծով չճշտված ենթադրություններ, կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի մակարդակի չճշտված կանխատեսումներ և այլն), որոնք կարող են բացասաբար ազդել հայտով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա:

Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա, ինչպես նաև այդ ռիսկերի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները: Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփել սույն մեթոդական ցուցումներին կից՝ Հավելված 10 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

10. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐ/

2027թ. բյուջեային հայտի հետ ներկայացնել Բյուջեային ծրագրերի նկարագրերը /անձնագրերը/ Հավելված 13-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

«Բյուջեային համակարգի մասին» ՀՀ օրենքում 2024թ. հունիսի 12-ին իրականացված փոփոխությունների համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունում ներդրվել է բյուջեային ծրագրերի գնահատման գործառույթ, որն ուղղված է լինելու բյուջեային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության համակարգված հավաքագրման, ուսումնասիրության և վերլուծության միջոցով ծրագրերի արդյունքայնության և արդյունավետության վերաբերյալ դատողություններ և հետևություններ իրականացնելուն: Ըստ այդմ բյուջեային միջոցառումները անցնելու են նաև գնահատելիության գնահատում, որի համար խիստ կարևոր է յուրաքանչյուր ծրագրի թարմացված անձնագրի ներկայացումը, ինչը կապահովի յուրաքանչյուր միջոցառման մասով ամբողջական տեղեկատվության ստացումը:

Միաժամանակ բյուջեային Հայտերի ներկայացումից հետո բյուջեային քննարկումների արդյունքում, հայտում կատարված փոփոխությունները պետք է արտացոլվեն բոլոր հավելվածներում, այդ թվում՝ բյուջեային ծրագրերի անձնագրերում, և լրամշակված հայտը ողջ փաթեթով ի լրումն պետք է ներկայացվի ՀՀ ՖՆ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Բյուջետային հայտի ամփոփ նկարագրություն

Պետական մարմնի անվանումը ¹	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
---------------------------------------	--------------------------------------

1. Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները²

Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացում, հանրային հատվածում բարելավրթության կառուցակարգերի ներդրում և խթանում, հանրային իրազեկվածության բարձրացում

2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները³

--

3. Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները⁴

Կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում
--

4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումները⁵

--

Ներկայացվում է 2027 թվականի բյուջետային հայտի շրջանակում

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պետական մարմնի անվանումը

ԲԳԿ	Ծրագրի/միջոցառման դասիչը		ԲԳԿ/Ծրագրի /միջոցառման անվանումը	Ծրագրի նպատակը/միջոցառման նկարագրությունը	Միջոցառման տեսակը ¹	Բյուջետային ծախսերը (հազ. դրամ)			Միջոցառման գծով բազային բյուջեն			Միջոցառման գծով առաջարկը ներառյալ բազային բյուջեի ընդլայնումները ² , նոր նախաձեռնությունները			Ծախսային խնայողության գծով առաջարկը (-) ³			Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության և բնույթը ⁴	Հիմնավորումներ/ Պատճառներ (այդ թվում՝ 2026 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 2027թ. բազային բյուջեի տարբերության պատճառները ըստ հիմնական գործոնների*)
	Ծրագիր	Միջոցառում				2025թ. (փաստացի)	2026թ. (հաստատված) ²	2026թ. (բազային) ³	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.	2027թ.	2028թ.	2029թ.		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
ԸՆԿԱՄԵՆԸ ⁷						420332.5	405693.8	464863.9	534669.3	521117.6	526361.4	534669.3	521117.6	526361.4	0	0	0		
	1181	11001	Կոտուսցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում	Կոտուսցիայի կանխարգելման համեմատորով գործընկերային հարաբերությունների զարգացում, հանրային ծանուցելիության, օրենքով վերապահված գործառնությունների և խաղողությունների իրականացման ապահովում	Ապահովել բարեկարգության և կոտուսցիայի կանխարգելման համակարգի կառուցվածությունը, շարունակական կրթությունը, համեմատորով կարողությունների զարգացումը և կոտուսցիայի կանխարգելման հաշվետվողականությունը, ինչպես նաև կոտուսցիայի կանխարգելման միասնիզմների թվայնացում:	417397.2	402738.8	461908.9	509543	515062.0	520305.8	509543.0	515062.0	520305.8					
	1181	11002	Կոտուսցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացմանն աշխատանքներ	Կոտուսցիայի կանխարգելման համեմատորով հանրային ծանուցելիության, օրենքով վերապահված գործառնությունների և խաղողությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում, կրթական բաղադրիչի զարգացում	Ձևավորել կոտուսցիայի դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետ կիրառմանն անհրաժեշտ կրթական դիսցիպլիններ, դրանք ներդնել կրթության համակարգ և ապահովել հավակոտուսցիոն մասնագիտացված կրթություն:	2935.3	2955	2955	18549.1	6055.6	6055.6	18549.1	6055.6	6055.6					
	1181	31001	կարողությունների զարգացում և փոխելիական հաղեցվածության ապահովում	կարողությունների զարգացում և փոխելիական հաղեցվածության ապահովում	Կոտուսցիայի կանխարգելման համեմատորով կարողությունների զարգացում և փոխելիական հաղեցվածության ապահովում	0	0	0	6577.2	0	0	6577.2	0	0					

Սույն հավելվածը ներկայացվում է ՄԺԾՄ փուլում, թարմացվում Բյուջեդային հայտի փուլում

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ*

ՄԱՍ 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ²¹

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1181	Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում

Ծրագրի միջոցառումները¹

ԳԶԳ-0

Ծրագրի դասիչը՝	1181	Հազար դրամ		
Միջոցառման դասիչը՝	1181-11001	Ցուցանիշներ		
Միջոցառման անվանումը՝	Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում	2025թ. (փաստացի)	2026թ. (պլան)	2027թ.
Նկարագրությունը՝	Հայտարարագրման համակարգի բարելավման, բարեվարքության սրահնդարձերի սահմանման և պահպանման հսկողության, հակակոռուպցիոն իրազեկման, հայտարարագրերի սրուգման ու վերլուծության, օրենքով սահմանված պահանջների կիրառման ծառայություններ			
Միջոցառման տեսակը ²	Ծառայությունների մատուցում			
Միջոցառումն իրականացնողի անվանումը ³	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով			
Արդյունքի չափորոշիչներ				
Արդյունքի չափորոշիչի տեսակը ⁴		Արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը		
	Հանրային ծառայության տեսակներ, որոնցում վարքագծի կանոնների միասնական կիրառումն ապահովված է, քանակ	-	7	10
	Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց մասնակցությամբ կազմակերպություններում իրականացված կոռուպցիոն ռիսկերի ներքին գնահատումների արդյունքներով ամփոփվող զեկույց, հատ	5	1	-
	Մեղադրաբանությամբ սահմանված չափորոշիչների հիման վրա ընտրված մարմիններում ու կազմակերպություններում իրականացված կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներն ամփոփող զեկույց, հատ	-	-	1
	Գործարար բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի կառավարման վերաբերյալ վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	-	30	30
	Հայտարարագրերի վերլուծության նպատակով ռիսկային ցուցիչների հաստատում, որոշում	-	1	-
	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման արդյունքներով ամփոփիչ զեկույց՝ ըստ Հանձնաժողովի սահմանած առաջնահերթությունների, քանակ	1	1	1
	Պաշտոնատար անձանց կողմից չներկայացված հայտարարագրերի քանակի նվազում, տոկոս	91	8	5
	Օրենքով սահմանված հիմքերի առկայության պարագայում հայտարարագրերի վերլուծություն, քանակ	-	200	350
	Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, այլ սահմանափակումների և վարքագծի կանոնների առերևույթ խախտումների ուսումնասիրություն, քանակ	-	120	200
	Ներկայացված բարեվարքության հարցաթերթիկների հիման վրա բարեվարքության ուսումնասիրություն և գնահատում, տոկոս	-	100	100
	Օրենքով սահմանված ժամկետում պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների ստուգում, տոկոս	-	100	100
	Օրենքով սահմանված կարգով կուսակցությունների աուդիտի կազմակերպում, տոկոս	-	100	100
	Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթներով կայացված ակտերը դատական կարգով բեկանման դեպքերի տեսակարար կշռի նվազում ակտերի ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս	-	10	8
	Կանխարգելման էլեկտրոնային համակարգի կատարելագործում, թվայնացված գործառնությունների քանակ	4	5	6
	Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքները, այդ թվում՝ բարեվարքության համակարգի տարրերը, մեկ օրենքի ներքո սահմանելուն և գործող ինստիտուտները կատարելագործելուն ուղղված նախագծերի փաթեթի մշակում, հատ	1	-	-
	Հայտարարագրերի վերլուծության և ստուգման արդյունքում հայտարարատուների գույքային դրության օրինականության և արժանահավատության խնդիրների արձանագրում, հետագա ընթացքի ապահովում, ստուգված և վերլուծված հայտարարագրեր՝ ըստ անձանց քանակի	423	-	-
	Հանրային համապատասխան պաշտոն զբաղեցնող անձանց կողմից բարեվարքության համակարգի տարրերին առնչվող խախտումների ուսումնասիրության առնչությամբ խնդիրների արձանագրում, հետագա ընթացքի ապահովում՝ ըստ դեպքերի քանակի	279	-	-

	Բարեվարքության առնչությամբ խնդիրներ ունեցող անձանց մուտքը և պաշտոնի առաջխաղացումը դատաիրավական համակարգում կանխելու նպատակով բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացություն ստացած անձանց համապատասխան պաշտոններում նշանակման թվի նվազում, տոկոս	10	-	-
	Կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ հսկողության ապահովման նպատակով կուսակցությունների հաշվետվությունների ստուգման արդյունքում խնդիրների արձանագրում, հետագա ընթացքի ապահովում, ստուգված հաշվետվությունների տոկոս	25.8	-	-
	Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկների բազային տվյալների հիման վրա ուսումնասիրություն, վերլուծություն և եզրակացության տրամադրում մինչև 500 հարցաթերթիկի դեպքում, տոկոս	150	-	
	Կուսակցությունների ֆինանսական աուդիտ, հատ	7	-	-
	ԲԳԿ-ի գծով հաստատված բյուջեի նկատմամբ կատարման տոկոսը	103.6	95	95
Միջոցառման վրա կատարվող ծախսը		417397.2	402738.8	509543.0
Ծրագրի դասիչը՝	1181	Ցուցանիշներ		
Միջոցառման դասիչը՝	1181-31001	2025թ. (փաստացի)	2026թ. (պլան)	2027թ.
Միջոցառման անվանումը՝	կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում			
Նկարագրությունը՝	Միջոցառման վրա կատարվող ծախսը - ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր			
Միջոցառման տեսակը ²	Ծառայությունների մատուցում			
Միջոցառումն իրականացնողի անվանումը ³	Կոոպացիայի կանխարգելման հանձնաժողով			
Արդյունքի չափորոշիչներ				
Արդյունքի չափորոշիչի տեսակը ⁴		Արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը		
Միջոցառման վրա կատարվող ծախսը		0	0	6577.2
Ծրագրի դասիչը՝	1181	Ցուցանիշներ		
Միջոցառման դասիչը՝	1181-11002	2025թ. (փաստացի)	2026թ. (պլան)	2027թ.
Միջոցառման անվանումը՝	Կոոպացիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ			
Նկարագրությունը՝	Կոոպացիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկերային հարաբերությունների զարգացում, հանրային ճանաչելիության, օրենքով վերապահված գործառույթների և լիազորությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում, կրթական բաղադրիչի զարգացում			
Միջոցառման տեսակը	Ծառայությունների մատուցում			
Միջոցառումն իրականացնողի անվանումը	Կոոպացիայի կանխարգելման հանձնաժողով			
Արդյունքի չափորոշիչներ				
Արդյունքի չափորոշիչի տեսակը		Արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը		
	Բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	-	60	60
	Հանրային ծառայողների և հանրային պաշտոն գրադեցնող անձանց վերապատրաստում վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, այլ սահմանափակումների վերաբերյալ, մասնակիցների քանակ	-	60	80
	Հանձնաժողովի տարեկան հաղորդում	-	1	1
	Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ հաղորդումը	-	1	1
	Հակակոռուպցիոն կրթական թվային հարթակի ներդրման արդյունքում վերապատրաստում անցած անձանց քանակ	9577	275	600
	Քաղաքացիական հասարակության և ՉԼՄ ներկայացուցիչների համար կազմակերպված կոոպացիայի կանխարգելման վերաբերյալ շարունակական վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	34	30	30
	Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգերում դասախոսական կազմերի վերապատրաստումների իրականացում, մասնակիցների քանակ	-	50	40
	Ուսուցիչների և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	-	220	230
	Իրազեկման հանդիպումներ ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների հետ, մասնակիցների քանակ	-	200	200
	Իրազեկման հոլովակների պատրաստում, տեսահոլովակների քանակ	-	-	5
	Կոոպացիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, զեկույցների քանակ	-	-	1

ԳԶԳ-0

ԳԶԳ-0

	Հանրակրթության և բարձրագույն կրթության համակարգերում հակոկոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման արդյունքում վերապատրաստումների իրականացում, քանակ	10	-	-
	Ուսուցիչների վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	140	-	-
	Դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	80	-	-
	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար կազմակերպված վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	30	-	-
	ՉԼՄ ներակայացուցիչների վերապատրաստումներ, մասնակիցների քանակ	20	-	-
	Միջազգային համաժողովների քանակ, այդ թվում՝ Կոռուպցիայի կանխարգելման համակարգը Հայաստանում և Քարեվարքության համակարգը Հայաստանում, հատ	1	-	-
	Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օր տոնակատարություն, մասնակիցների քանակ	58	-	-
Միջոցառման վրա կատարվող ծախսը		2935.3	2955.0	18549.1

* Հավելվածը անհրաժեշտ է լրացնել Phonetic (Times armenia) տառատեսակով

420332.5 405693.8 534669.3

Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման տարրերի և ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների

Հազար դրամ

Գործառնական դասակարգման 1			Ծրագրային դասիչը		Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, բյուջետային ծրագրերի միջոցառումների, բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների անվանումները	2025թ. (փաստացի)	2026թ. (հաստատված բյուջե)	2027թ. բյուջե (ներառյալ ընդլայնումները և նոր նախաձեռնությունն երը)	2028թ. բյուջե	2029թ. բյուջե
Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Միջոցառում						
1	2	3	4	5	6	7	8	11	12	13
					ԸՆԴԱՄԵՆԸ	420332.50	405693.80	534669.30	521117.60	526361.40
			1181		Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	420332.5	405693.8	534669.3	521117.6	526361.4
					այդ թվում՝					
			1181		Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում	420332.5	405693.8	534669.3	521117.6	526361.4
					այդ թվում՝					
01	06	01	1181	11001	Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում	417397.2	402738.8	509543.0	515062.0	520305.8
					այդ թվում՝ ըստ կատարողների					
					Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	417397.2	402738.8	509543.0	515062.0	520305.8
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ					
					ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	417397.2	402738.8	509543.0	515062.0	520305.8
					ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	417397.2	402738.8	509543	515062.0	520305.8
					ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	379907.9	364282.8	407425.7	412944.7	418168.5
					Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	379907.9	364282.8	407425.7	412944.7	418168.5
					- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	292157.1	315166.0	352491.9	357266.8	361786.3
					- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	65719.6	27333.0	30730.8	30991.5	31230.7
					- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	22031.2	21783.8	24203.0	24686.4	25151.5
					ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ	37372.8	38199.0	101617.3	101617.3	101617.3
					Շարունակական ծախսեր	2638.8	14765.0	17655.9	17655.9	17655.9
					- Էներգետիկ ծառայություններ	0	2500.0	5207.5	5207.5	5207.5
					- Կոմունալ ծառայություններ	0	0.0	94.2	94.2	94.2
					- Կապի ծառայություններ	2605.8	3700.0	6069.2	6069.2	6069.2

					- Ապահովագրական ծախսեր	33.0	45.0	45.0	45.0	45.0
					-Արտագերատեսչական ծախսեր	0	8520.0	6240.0	6240.0	6240.0
					Ծառայողական գործուղումների գծով ծախսեր	2596.5	1600.0	4843.3	4843.3	4843.3
					- Ներքին գործուղումներ	0	0.0			
					- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	2596.5	1600.0	4843.3	4843.3	4843.3
					Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	30233.7	17652.8	71587.2	71587.2	71587.2
					- Համակարգչային ծառայություններ	6558	5131.0	38095.4	38095.4	38095.4
					- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	0	0.0			
					- Տեղեկատվական ծառայություններ	0	0.0			
					Կառավարչական ծառայություններ	22205	9470.0	28440.0	28440.0	28440.0
					- Ներկայացուցչական ծախսեր	999.4	2000.0	4000.0	4000.0	4000.0
					- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	471.3	1051.8	1051.8	1051.8	1051.8
					Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	200	0.0	0	0	0
					- Մասնագիտական ծառայություններ	200	0.0			
					Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	1555.8	2317.0	2466.7	2466.7	2466.7
					- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	303.3	740.0	889.7	889.7	889.7
					- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	1252.5	1577.0	1577.0	1577.0	1577.0
					Նյութեր (Ապրանքներ)	148	1864.2	5064.2	5064.2	5064.2
					- Գրասենյակային նյութեր և հագուստ	0	1300.0	3000.0	3000.0	3000.0
					- Տրանսպորտային նյութեր	148	64.2	64.2	64.2	64.2
					- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	0	500.0	2000.0	2000.0	2000.0
					ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	116.5	257.0	500.0	500.0	520.0
					Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	116.5	257.0	500.0	500.0	520.0
					այդ թվում՝					
01	06	01	1181	31001	կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	0	0	6577.2	0	0
					այդ թվում՝ ըստ կատարողների					
					Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	0	0	6577.2	0	0
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ					

					ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	0	0	6577.2	0	0
					ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	0	0	6577.2	0	0
					-Վարչական սարքավորումներ	0	0.0	6577.2	0.0	0.0
09	05	02	1181	11002	Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ	2935.3	2955.0	18549.1	6055.6	6055.6
					այդ թվում՝ ըստ կատարողների					
					Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	2935.3	2955.0	18549.1	6055.6	6055.6
					այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ					
					ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	2935.3	2955.0	18549.1	6055.6	6055.6
					ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	2935.3	2955.0	18549.1	6055.6	6055.6
					ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ	2935.3	2955.0	18549.1	6055.6	6055.6
					Ծառայողական գործուղումների գծով ծախսեր	426.6	744.0	432	432	432
					- Ներքին գործուղումներ	426.6	744.0	432	432	432
					Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	2508.7	2211.0	18117.1	5623.6	5623.6
					- Վարչական ծառայություններ					
					- Տեղեկատվական ծառայություններ	332.9	864.0	16043.5	3550	3550
					- Ներկայացուցչական ծախսեր	2175.8	1347.0	2073.6	2073.6	2073.6
					Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	0	0.0	0	0	0
					- Մասնագիտական ծառայություններ					
					Նյութեր (Ապրանքներ)	0	0	0	0	0
					- Գրասենյակային նյութեր և հագուստ					
x	x	x	x	x	Ընդամենը					
x	x	x	x	x	այդ թվում՝ նոր նախաձեռնությունները					

Սույն հավելվածը լրացվում է 2027թ. բյուջետային հայտի ներկայացման փուլում

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (հարկիրճ շարադրանք)¹

1. ՈԼՈՐՏԸ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության ոլորտն առնչվում է.

1. ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ սահմանված կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի ամրապնդման քաղաքականությանը՝ ինստիտուցիոնալ համակարգերի ներդրման և շարունակական կատարելագործման համատեքստում.

2. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրման համակարգի, բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ առկա կարգավորումների ապահովմանը՝ Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակում.

3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված Հանձնաժողովի հետևյալ լիազորությունների իրականացմանը՝

• պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննում և լուծում.

¹ Ոլորտային քաղաքականության ոլջ համառոտ շարադրանքը չպետք է գերազանցի 6 էջի սահմանները:

Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի քննում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի քննում գլխավոր դատախազի տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին:

- անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկությունների (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ) ներկայացում իրավասու մարմինն կամ պաշտոնատար անձին:

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցում, ինչպես նաև Ազգային ժողովի խմբակցություններին դիմում՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ:

- հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրների վարում:

- հայտարարագրի ձևանմուշի, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջների, հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկի, հայտարարագրերի ռեեստրի վարման, հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու, հայտարարագրի արխիվացման կարգերի,

ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության և ռիսկային չափորոշիչների սահմանում.

- հայտարարագրերի, ինչպես նաև նվերների հաշվառման ռեեստրի հրապարակման ենթակա տվյալների հրապարակում.

- հայտարարագրմանը և նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում և լուծում.

- էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության և մեթոդական աջակցության տրամադրում.

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկության ներկայացում:

Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի ներկայացնում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի ներկայացնում գլխավոր դատախազի տեղակալների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ, եթե դրանք առնչվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին.

- օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների մեկնաբանում.

- էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայում.

- անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարում և տվյալների հրապարակում.

- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծության իրականացում և դրանց վերաբերյալ իրավասու մարմին առաջարկությունների ներկայացում.

- օրենքով նախատեսված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակում և հաստատում, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, չափորոշիչները, գործիքակազմը, հրապարակում է գնահատման արդյունքները, մարմինների և կազմակերպությունների առաջարկով՝ նաև վերջիններիս ներկայացրած կարծիքները.

- օրենքով նախատեսված մարմիններից և կազմակերպություններից կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացին առնչվող տեղեկությունների և փաստաթղթերի պահանջում և ստացում, գնահատումների իրականացում.

- կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններ, մասնագիտական խորհրդատվության տրամադրում.

- կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակում և դրանք ներկայացում Կառավարություն.

- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի ներկայացում իրավասու մարմին.

- իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկությունների ներկայացում իրավասու մարմին.

- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակում և հաստատում, միջոցառումների իրականացում.

- կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, կրթական ծրագրերի իրականացման համար ուսումնամեթոդական ուղեցույցների և այլ նյութերի տրամադրում.

- իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների կազմում, դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններ.

- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրությունների իրականացում և դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների ներկայացում.

- օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում և դրանց արդյունքներով խորհրդատվական եզրակացության ներկայացում.

- օրենքով սահմանված դեպքերում և կարգով բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության իրականացում և բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների ներկայացում, որոնք ենթակա չեն հրապարակման.

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների (կանոնագիրքը), ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագրքի ընդունում, հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի մշակում.

- անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև շահերի

բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկայի ամփոփում, դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում մեկամսյա ժամկետում նույն օրենքին համապատասխան ներկայացված հայտարարագրի վերլուծության ենթարկում և դրա արդյունքների տրամադրում դիմող մարմինին.

- կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության ու ամբողջականության ստուգում, կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում և լուծում.

- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացում.

- իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառման, քննարկման ապահովում, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկում, վիճակագրության վարում և «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացում.

- հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունման սահմանափակումների կիրառման ուղեցույցների մշակում:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Միջնաժամկետ հատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման ապահովումը:

Սույն միջնաժամկետ ծրագրի հիմնական թիրախներն են.

1. Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման գործող կառուցակարգերի կատարելագործումը.

2. Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման և կրթական ծրագրերի շարունակական իրականացումը.
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների շարունակական զարգացումը.
4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության բարձրացումը.
5. Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքների թվայնացումը, արհեստական բանականության միջոցով տվյալների վերլուծությունը:

Ակնկալվում է նշված թիրախների միջոցով նպաստել միջազգային ոլորտային կազմակերպությունների կողմից («Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության Կոռուպցիայի ընկալման համաթիվ, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 5-րդ փուլի գնահատումներ, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության գնահատում) ՀՀ հակակոռուպցիոն ոլորտի առնչությամբ տրված ցուցանիշների (գնահատականների) բարձրացմանը:

Սույն ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ բարեվարքության կառուցակարգերի շարունակական կատարելագործման միջոցով նպաստել հանրային իշխանության մարմիններում, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում բարեվարքության ամրապնդմանը, բարեվարք վարքագծի ձևավորմանը, կոռուպցիոն ռիսկերի և դրսևորումների նվազեցմանը, թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև կոռուպցիայի նկատմամբ հանրության զգայունության և անհանդուրժողականության բարձրացմանը:

Այս վերջնարդյունքը բխում է ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշներից (մասնավորապես՝ «Նպատակ 16.5. Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով»):

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
--

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

2027-2029 թթ պետական ՄԺԾԾ և ՀՀ 2027թ պետական բյուջեի նախագծիերի մշակման բյուջետային հայրերի
կազմման և ներկայացման մեթոդական ցուցումներ